

Հայաստանի ազգային գրադարանը հրատարակության է պատրաստել Բոստոնի Արմինյան Բիվյու (*The Armenian Review*) հանդեսի 1948-2008թթ. մատենագիտությունը:

THE ARMENIAN REVIEW

A BIBLIOGRAPHY & INDEX | 1948 – 2008

Compiled & Edited by **ARA GHAZARIANS**



Հայաստանի ազգային գրադարանում ավարտվեց Բոստոնի Արմինյան Բիվյու հանդեսի (*The Armenian Review: Bibliography-Index /1948-2008/*) հիսուն տարիների մատենագիտության պատրաստումը:

1919-ին հիմնադրված Հայաստանի ազգային գրադարանը համարվում է հայերեն տպագիր ժառանգության խոշորագույն պահոցն աշխարհում: Գրադարանի մամուլի հավաքածուն ներառում է Հայաստանի Հանրապետությունում, Արցախում և սփյուռքում հրատարակված և հրատարակվող հայերեն ավելի քան 5600 անուն պարբերականներ:

Հայաստանի ազգային գրադարանում անցած հարյուրամյակի ընթացքում հրատարակվել են արժեքավոր մատենագիտական ժողովածուներ, պարբերականների մատենագիտական ցանկեր, կենսամատենագիտություններ և այլն:

Մոտ ժամանակներս պատմաբանների, բանասերների, մատենագետների աշխատասեղանին կդրվի նոր, ուշագրավ հրատարակությունը՝ *The Armenian Review: Bibliography-Index (1948-2008)* –ը: Այն Հայաստանի ազգային գրադարանի և սփյուռքում հայագիտությամբ զբաղվող նվիրյալների *համատեղ աշխատանքի արդյունքն է: Համոզված ենք, որ այս համագործակցությունը օրինակելի նախադեպ կդառնա սփյուռքում հրատարակվող պարբերականների մատենագիտական ժողովածուների համատեղ կազմման և հրատարակման համար: Արդյունքում կամրապնդվեն նաև Հայաստան-Սփյուռք ակադեմիական կապերը:*

Միջազգային ճանաչում վայելող անգլերեն հայագիտական այս հանդեսը հիմնադրման օրվանից (1948 թ.) հետապնդում է հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը և գրականությունը անգլիախոս հասարակությանը պատշաճ կերպով ներկայացնելու նպատակ: Անգնահատելի է նրա ներդրումը ԱՄՆ-ում հայագիտությունը՝ որպես ակադեմիական ուսումնասիրության ուղղություն ամրագրելու, հայագետ հետազոտողների նոր սերունդ ձևավորելու գործում: Հանդեսն իր գործունեության տասնամյակների ընթացքում դարձել է Հայրենիքի ու Սփյուռքի գիտական փոխհամագործակցության հարթակ:

Սույն մատենագիտությունը կազմված և խմբագրված է ԱՄՆ Մասսաչուսեթս նահանգի Արլինգթոն քաղաքի Հայ Մշակութային Հիմնարկության տնօրեն Արա Ղազարեանցի աշխատասիրությամբ: Բաղկացած երեք բաժիններից՝ *Հոդվածներ, Գրախոսականներ և Պատկերներ*, պարունակում է հանդեսի բոլոր 200 թողարկումներից /ավելի քան 20 հազար էջ/ վերցրած 3266 մատենագիտական նկարագրություն:

Մատենագիտության ամենածավալուն մասը՝ *Հոդվածներ*, բաղկացած է 25 թեմատիկ բաժիններից, ինչպես օրինակ՝ Մարդաբանություն, Հասարակագիտություն, Ազգագրություն, Իմաստասիրություն, Գեղարվեստ, Հայոց եկեղեցի, Լեզու և լեզվաբանություն, Գրականություն, Հայոց պատմություն վաղ ժամանակներից մինչև մեր օրերը, Սփյուռքահայ համայնքներ և հիմնարկներ, Քաղաքական կուսակցություններ, Կրթություն, Խորհրդային Միություն (հանրապետություններ, գաղափարախոսություն, ազգերի և ազգությունների քաղաքականություն), Օրենսդրություն, Քաղաքական և քաղաքացիական ազատություններ և այլն:

Երկրորդ մասը՝ *Գրախոսականներ*, ավելի քան 484 գրքերին, հային, հայությանը, հայոց պատմությանը, տարածաշրջանի և հարևան ժողովուրդների պատմությանը վերաբերող բազմազան նյութերի հարուստ աղբյուր է:

Երրորդ և վերջին մասը՝ *Պատկերներ*, բաղկացած է 9 ենթաբաժնից, և ներառում է նկարներ, գծագրեր, քարտեզներ, դիմանկարներ, հանդեսի տվյալ համարի շապիկի պատկերը, լուսանկարներ և այլն, որոնք ընդգրկվել են հանդեսի տարբեր համարներում հրատարակված հոդվածներում:

Մատենագիտության մեջ ներառված են նաև միջազգային ճանաչում ունեցող ավելի քան 100 ակադեմական հանդեսներում լույս տեսած հայությանը, Հայաստանին և հայոց պատմությանն ու տարածաշրջանի բազմապիսի իրադարձություններին նվիրված նյութեր:

Մատենագիտությունն ավարտվում է հավելվածով և մանրամասնորեն մշակված անձնանունների ու նյութերի օժանդակ ցանկերով:

Մատենագիտության օրինակները կարելի է ձեռք բերել Հայաստանի ազգային գրադարանից և Երևանի գրախանութներից: Արտասահմանում, ի մասնավորի, ԱՄՆ-ում՝ դիմելով «Ամարաս» հաստատություն (www.AmarasOnline.com):

Նախահրատարակության օրինակների գինն է \$45 առաքման ծախսով, հետ-հրատարակությանը՝ \$50 ներառյալ առաքման ծախսը:

Մատենագիտության վաճառքից գոյացած հատույթը հատկացվելու է «Ամարաս» հաստատությանը, հետագայում նմանօրինակ աշխատությունների հրատարակման համար: